

## Ն Ա Խ Ը Բ Ա Ն

(Երկու խօսք այս պօէմայի առիթով)

Հայ ժողովրդական աւանդական այս գիւցազներ-  
գական պօէման առանձին ուշադրութեան արժանի,  
մանաւանդ հետաքրքրական է այն պատճառով, որ  
հիմնական է և ունի պատմական նշանակութիւն։  
Դեռ Քրիստոսից հազարաւոր տարիներ առաջ, երբ հա-  
յերը տակաւին չէին ունեցել քրիստոնէական դաւանող  
վարդապետութիւն, հնումն եղել է Ասորոց թագաւո-  
րութիւն։ Այդ ազգապետութեան անդութ և բանակալ  
թագաւոր Սենեքերիմը, Հայաստանում հայերի դէմ  
մղած Ֆի ամենագոռ պատերազմական վտանգաւոր ճրգ-  
նաժամում, խոստանում է «մեծ կուռքին» իր որդիքը  
զոհ մատուցանել, երբ վերահաս փորձանքից կ'ազա-  
տուի։ Բայց ինքն է զոհում Սանասարի ձեռքով, և  
երկու եղբալը (մեծը Առլի-Մէլլիքն է) փախչում են  
Հայաստանի կողմք՝ մեր Սկալորդի թագաւորի օրերով։  
Նրանցից ահա ծագում՝ առաջ է գալիս Հայոց Արծորու-  
նեաց երեսլի նախարարութիւնը, յայտնի ազգին և  
Հայրենիքին մատուցած մեծամեծ ծառայութիւններով  
ու քաջութիւններով, թողած արժանաւոր սերունդով։  
Ապրելով Վանալ ծովի հարաւալին ափերում՝ նրանք  
հիմք են դնում Սամնոյ գաւառի շինութեան և սկզբնա-  
ւորութեան։ Այս պատմութեան մասին խօսւում է և  
Ս. Մանդինեանի «գիւցազնական աշխարհ» ում և Հայ-  
կական ուրիշ հին պատմութեան էջերում։

«Ասլի-Մէլիք և Սանասար» Պատման, ինչպէս կը նկատեն «Լումար» հանդիսի ընթերցողները, կազմում է մեր երկասիրութիւնների երրորդ փորձը. Եթէրորդը՝ «Առիւծաձև Մհեր» արդէն Ս. Պետերբուրգի գրաքըննարանից թոլլատրուած լինելով՝ մամուլի տակն է և լոյս կը տեսնէ Մոսկուայում մինչև առաջիկալ լուլիսի 1-ը. Իսկ առաջին փորձը՝ «Մոստոմ և Սալման» արդէն լոյս ենք ընծալել, որին նուիրուեց «Մուրճում» (1897 թ. № 11—12 նոյեմբեր գեկտեմբեր), մի համակ- րական և նպաստաւոր գրախօսական լոդուած պ. Ցովհ. Տէր-Միրաքեանի կողմից. Իսկ շորրորդ փորձը («Սա- սունցի Դաւիթ») ես կաշխատեմ տալ «Լումալի» լաջորդ գրքում: Նոյն գրքում կը լինի սիմ ճանապարհորդա- կան լիշողութիւններ Պարսկաստանում» (թուուցիկ տպա- ւորութիւններ) շարք լոդուածների շարունակութիւ- նը, որ լոյս էր տեսնում Աենետկի «Բազմավէպ» ամ- սագրում:

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԽԱՆՅ





## ԱՍԼԻ-ՄԵԼԻՔ ԵՒ ԱԾՆԱԾԾՐ

(Ազգային պօէմա)

Դիւցաղներդական — չափական բանաստեղծութիւն

### Ա



Եր հին Հայկական պատմութիւն-  
ներում  
Գրուած է, թէ վաղ ժամանակ-  
ներում  
Կռապաշտական ունէր գոլութիւն  
Ասորեստանեալց թագաւորու-  
թիւն:

Քրիստոսից առաջ տարիներ հազար  
Քաջ, տիրապետող ալդ ազգի համար  
Մի մեծ թագաւոր կար Սենեքերիմ,  
Հոգւով բռնակալ, չար և ոխերիմ:  
Թշնամի դարձած հայերին<sup>1)</sup> կատեր,  
Ինքը կռապաշտ, Աստուած չը գէտէր.  
Միտք նպատակը — չարի ճանապարհ,  
Անգութ արարքով լցրել էր աշխարհ:  
Եւ քանի՛ անգամ ժողովեց զօրքեր,  
Հայի աչքերից ցօղեց արցունքներ.

1) Սենեքերիմի ժամանակ հայերը դեռ քրիստոնեայ չէին:

Հին Հայաստանը գողում էր ահից,  
 Փախչում մարդիկը վերահաս մահից։  
 Մի անգամ ևս մտաւ Հայաստան,  
 Պարզեց օգի մէջ դրօշ լաղթութեան  
 Եւ վերադարձաւ անթիւ աւարով,  
 Շղթալած անմեղ շատ գերիներով։  
 Գերիների մէջ կար մէկ հայ աղջիկ,  
 Մազերով երկայն, գէմքով գեղեցիկ։  
 Սենեքերիմը երբ նրան տեսաւ՝  
 Հաւանեց իսկոյն և ամուսնացաւ.  
 Ապա ունեցաւ երկու զաւակներ,  
 Երկուսն էլ տղայ, կտրիչ ոյժի տէր,  
 Մէկն Ասլի Մէլիք, միւսը Սանասար.  
 Բայց Սենեքերիմ՝ կեանքին հաւասար՝  
 Միրում էր միայն կանգնեցրած կուռքեր,  
 Որոնց բերում էր կենդանի զոհեր,  
 Եւ ծնրագրած երկրպագում էր  
 Նրանց առաջեւ և աղօթում էր,  
 Եւ հաւատում էր նրանց մշտական  
 Զօրութիւններին երեւակայական...»

## Բ

Մի անգամ նորից զօրքով արշաւեց  
 Եւ Հայաստանում գիւղեր աւերեց։  
 Բայց այս անգամին մէկ հոգի, մարմին՝  
 Դառած հայերը Սենեքերիմին  
 Նեղը լծեցին. լուսահատ արքան  
 Դիմեց իր պաշտած կուռքի զօրութեան.  
 Եւ բացականչեց. ո՞վ կուռք զօրաւոր,  
 Ազատիր տեղից այս վտանգաւոր,  
 Եւ երբ ողջ դառնամ խոստանում եմ քեզ  
 Իմ երկու տղալք անել ողջակէզ...»

## Գ

Կինը անհանգիստ մարդուն կը լիւէր,

Վատ երազ տեսաւ յանկարծ մի գիշեր,  
 Որպէս թէ երկու փալլուն ճրագներ  
 Ճոկ-ջոկ ձեռքերին նա բռնած ունէր.  
 Մերթ վառւում էին լոյսերով պայծառ,  
 Մերթ հանգչել ուզում ու կիսախաւար...  
 Առաւօտը վաղ քնից զարթելով  
 Մայրը վշտալից միտը բերելով  
 Եղելութիւնը տեսած երազի  
 Պատմեց տղերանց «թէ ձեր մուրազի  
 Կարօտին հասնել կ'ուզէք անփորձանք,  
 Աշխատեցէք զուտ ազատել ձեր կեանք...  
 Երկու ճրագներ տեսալ երազում,  
 Մերթ վառւում էին, մերթ հանգչել ուզում.  
 Երևաց և ինձ մի սուրբ ալեսոր,  
 Յալտնեց՝ ձեր հալրը կուտում հեռաւոր  
 Զօրքով պաշարուած շատ նեղացած է,  
 Կուռքին զոհելու ձեզ խոստացած է,  
 Երբ վերագառնալ—ձեզ մատաղ կանի,  
 Ո՞վ անգութ հօրից ձեզ կը պաշտպանի.  
 Արդէն սրտի մէջ մտել է չարը,  
 Գնացէք, գտէք ձեր գլխի ճարը...»

## ¶

Խեղճ տղաները, հօրից վախեցած,  
 Հացի պաշարով պարկը շալակած,  
 Ճանապարհ ընկան Աստուած կանչելով,  
 Իրանց սև օրուալ բաղդն անիծելով:  
 Շատ պատեցին, շատ երկիր տեսան,  
 Մինչև մի նեղ ձոր <sup>2)</sup> վերջապէս հասան.  
 Ալդ ձորի միջով վազում էր մի գետ <sup>3)</sup>  
 Եւ բարակ առու գալիս նրա հետ  
 Խառնւում միւս կողմից և շերտում ոյժով  
 Մինչև մէջ աեղը բարձը աղմուկով:

<sup>2)</sup> Սասունի նշանաւոր ձորը:

<sup>3)</sup> Մուրադ-Զայ:

Այս բանի վըրալ շատ զարմանալով  
Կանչեց Սանասար մեծ հիացումով.  
— «Նալիքը ալս Զրին, ոհ, Ասլի-Մէլիք,  
Ինչպիսի՛ աղմուկ հանում են ալիք.

Ո՞վ գտնի ակը  
Եւ մի տուն զինի՝  
Այսպէս զաւակը  
Ուժեղ կըլինի <sup>4)</sup>)...»

<sup>4)</sup> Սանասարի նախազգացածը կատարւում է վերջը։  
ունենում է մի տղայ ևնոիւծաձև Մհեր» անունով։ սա  
այնքան ուժեղ և բազ է լինում, որ տասնմէկ տարի գեռ  
չըլլացած հասակում յաղթում, սպանում է Առիւծ վիշա-  
պին և ժողովրդի կեանքը աղատում է սովի ճանկերից։  
Զարմանալի է, թէ ինչո՞ւ պ. Մանդինեանի Պրիւցազնական  
աշխարհում՝ ոչ մի յիշատակութիւն չըկայ ևնոիւծաձևի»  
մասին, մինչդեռ վարիանտներում և համակրելի է և հիմք  
ու գոյութիւն ունի Առիւծ-վիշապի հետ եղած այդ սրկա-  
ծը (աես մեր երկրորդ փորձ) ժողովրդականի կողմից այդ  
արկածում երևակայեցէք ինչպիսի՛ դիցաբանութիւն և ինչ-  
պիսի՛ բարոյական մրցական, գեղասիրական զգացունքների  
և սկզբունքների աղբիւրներ են պատկերացած։ Զգալ ժո-  
ղովրդի անել դրութիւնը, մոռանալ անձը և գնալ մնանակ,  
ացնել 11 տարեն հասակում, բաղցած Վիշապ-առիւծի դէմ  
մնամբանելու և յաղթելով աղատել սովի անգութ ճիրան-  
ներից մի ժողովրդի ամրող կեանք, — յիրաւի ինչ հրաշալի  
անձնուիրութեան և վսեմ գաղափարական յաղթանակող  
օրինակ։ Մի ուրիշ նշանաւոր դէպքն է Առիւծաձև Մհերի,  
որ կարողանում է յաղթել մի մեծ, յանդուգն և անուանի  
Պահլաւան հերոսի, (մականունը Սև Բաթման-Պրան, որին  
ժողովուրդը իսկական անունն է վերագրում «Սասմայ ծռե-  
րում» յիշուած Զանջնաւան և Բաթմանայ, Բիւլ։ Մանրամաս-  
նութիւնը մեր երկրորդ փորձում, որը հարկը պահանջե-  
լիս եղել Մհերից, բայց ինքն է լինում յաղթուելով Մհե-  
րին հարկատու...

## Ե

Երկու եղբալրներ առուն բռնելով  
 Գտան աղբիւրը երկար ման գալով.  
 Իսկոյն ձգեցին աղբիւրի գլխին  
 Հսկայական հիմք բերդի ահագին:  
 Ասլի Մէլիքը ջանքով անխնալ  
 Միշտ աշխատում էր զինութեան վրալ,  
 Իսկ Սանասարը որսի էր գընում:  
 Երբեմն պարապ՝ եղբօրն էր օգնում:  
 Ասլի. Մէլիքը վերջին մի օրը  
 Գնաց և տեսաւ քնած եղբօրը,  
 Թափել էր գետնին արիւնոտ որսեր.  
 Նրա վիճակին շատ կարօտասէր  
 Սիրտը կսկծաց. «Վ. Եր կաց, Սանասար,  
 Բաւ, թափառական ընկանք սարէսար.  
 Թողնենք ալստեղը անմարդաբնակ,  
 Ապրել չի լինիլ երկուսով մենակ,  
 Գնանք բազմամարդ քաղաքներ մտնենք.  
 Ցաւող, օգնական մեզ մի տէր» գտնենք.  
 Մինչև Երբ ուտենք հում, տնալի միս,  
 Շատ շարչարուեցինք ալս քանի ամիս.  
 Դեռ կիսակառոյց բերդի շինութեան  
 Վրալ թափեցինք քրտինք բաւական.  
 Խնչ խելքով, ասա՛, զինում ենք ալս բերդ:  
 Եւ փըշացնում ի զուր սիրտ ու լերդ:  
 Եթէ գթառատ Աստուած կամենար՝  
 Մեր հօր պալատը, ամրոցը կըտար...»

## Զ

Եւ եղբալրները ճանապարհ ընկան,  
 Բերդը թողեցին ու առաջ եկան  
 Թագաւորի մօտ Երուսաղէմի.  
 Խոր գըլուխ տալով նրան մի առ մի  
 Պատմեցին տիտուր իրանց դրութիւն՝  
 Հայելով գթած, բարի օգնութիւն.

— «ԽԵՂԾ ԵՆՔ, — ասացին երկու եղբայրը, —  
Տանից հեռացըց մեզ անգութ հալրը.  
ծակատագիրը այս է վիճակել.  
Այժմ եկել ենք, քո ոտքը ընկել,  
Եւ յալտնում ենք քեզ, ովք մեծդ արքալ,  
Որ եղբայրներին ցատղ տէր չը կալ.  
Ներքեց դու ես, վերև Աստուած  
Մեղ պահպանելու եղիլ ողորմած.  
Դրա փոխարէն կարանք ծառալիլ,  
Աշխարհի առաջ չենք ամաչացնիլք:  
— Հալրը որդիկերանց ոնց կ'արհամարհի,  
Ում զաւակներն էք և որ աշխարհի.  
Հարցըց թագաւորն Երուսաղէմի.  
— «Մենք զաւակներն ենք Սենեքերիմի,  
Որ թագաւոր է նստած Բաղդագում <sup>5)</sup>,  
Հոգւով բռնակալ — սարսափ է ազդում  
Խեղճ հալոց ազգին և քէնախնդիր  
Քանիցըս անգամ Հայաստան երկիր  
Արշաւանք գործեց, քանգեց, աւերեց,  
Շատերին անմեղ զղթայով գերեց.  
Բայց վերջին անգամ, նեղուած հալերից,  
Խոստացաւ կուռքին — երբ պատերազմից  
Ողջ վերագառնալ — մեզ մատաղ անել,  
Սակայն մեր մալրը կուզէր պաշտպանել,  
Պատմեց գիշերով տեսած երազը.  
«Թէ կըսիրէք դուք ձեր կեանք, մուրազը՝  
Գնացէք, ասաց, ուրիշ աշխարհներ,  
Գտէք ձեր գլխին փրկող հնարներ...  
Ահա փախել ենք հեռու վաթանից,

<sup>5)</sup> Թէկ ժողովուրդը պյստեղ յիշում է Բաղդատի անունը, բայց ժամանակադրական պատմական փաստերի հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ Բաղդադը Սենեքերիմի ժամանակ գոյութիւն չէ ունեցել, և բացի այդ, Բաղդադի խալիֆաները եղել են միշտ մահմեդական և ոչ թէ կռազաշտ, իսկ Սենեքերիմը, Ասորեստաննայց այդ թագաւորը իրօք եղել է կռազաշտ:

Բոնակալական մեր հօր ճիրանից.  
— Այժմ խնդրում ենք քեզ մօտ ընդունես  
Հայրական սիրով և մեղ պահպանես...»

## Է

Բայց նրանց առաջ արքան թափ տուեց  
Ամուր պողպատը ու պատասխանեց.  
— Ցաւում եմ հօրից վիճակուած որբ էք,  
Բայց ձեզ ընդունել չեմ կարող երբէք,  
Լսելով տղերքն էք Անենեքերիմի,  
Որ մեր ազգի հետ շատ է թշնամի.  
Զեր մեռնելներից հեռու ենք փախչում,  
Կնոջանիներին չենք էլ ճանաչում.  
Գնացէք, տէր չենք ձեր գլխի համար,  
Այստեղ գործ չըկալ ձեզ վայել լարմար...»

## Ը

Նեղացած սրտով երկու եղբալը  
Գնացին դէպի Մշոլ աշխարհը.  
Մուսիլ անունով թագաւորի մօտ.  
— «Բաղդից հալածուած, օգնութեան կարօտ  
Եկել ենք քեզ մօտ մենք աղաշելու,  
Որ կամք ունենաս մեզ պաշտպանելու.  
Դրա փոխարէն կարանք ծառալել,  
Աշխարհի առաջ չենք ամաչացնիլ:  
Խնդրական ձեռով նրանք ասացին  
Եւ թագաւորին գլուխ իջեցրին.  
— Ում զաւակներն էք և ինչու համար  
Եկել էք հեռուից ալս օտար աշխարհ.  
Ի՞նչ կարիք ունէք, ասացէք, որդիք,  
Կըկատարեմ ես ձեր համեստ խնդիրք...»  
— «Ո՛չ, պակասութեան մենք չունինք կարիք,  
Սահպուած եղանք թողնել հայրենիք,  
Որովհետեւ մեր հայրը բռնակալ  
Ուզեց իր պաշտած կուռքին մեղ զո՞հ տալ

Ու ալդ պատճառով, մեր մօր խորհրդով,  
Փախանք այս կողմը՝ վտանգն զգալով:  
Սենեքերիմ է անունը մեր հօր,  
Խնքը կռապաշտ և քաջ թագաւոր...  
— Հերիք, լոեցէք, այս ինչ եմ լսում...  
Զեզ պէս տղերանց շատ եմ ափսոսում,  
Որ չէք ծառալիլ ինձ հաւատարիմ,  
Երբ որ ձեր հայրն է չար Սենեքերիմ.  
Թող հեռու կորչէ անզգամ շունը,  
Մի լիշէք նրա կեղաստ անունը.  
Նա թշնամի է, չունի խիշդ, ամօթ,  
Իր գէշ արարքով աշխարհին ծանօթ...  
Ի՞նչ խելք, թշնամուն տանս ընդունեմ,  
Ի՞նչ է, նրանից անհանգիստ լինիմ.  
Ո՞ր անմիտ հօվիւ կ'ընդունէ գալլին  
Իր շան փոխանակ պահապան հօտին  
Ա՞նտեղ գնացէք — կամենում էք ուր,  
Զեր առամներին չըկալ կերակուր...»  
Այսպէս արքան էլ Մշոլ աշխարհի  
Կորեց յոյսերը խեշդ եղբայրների...»

## Թ

Մուշից հեռացան և ճանապարհին  
Երկու եղբայրը մտքումը դրին  
Երթալ այս անդամ Մելքոն արքալին.  
Սանտսարն ասաց Ասլի. Մէլիքին.  
— «Եզրալը, սեերես ինչ ենք ամաշում,  
Մենք ալդ հօրիցն ենք զզուանքով փախչում.  
Էլ ինչու համար ալդ զան անունը  
Մեզ վրալ դրել, քանդում մեր տունը,  
Ե՛կ, ալսուհետեւ ում մօտ ո՞ր գնանք,  
Կամ ով որ հարցնէ՝ այս պատասխան տանք,  
Թէ մենք բան չունինք, ոչ տուն, ծնողներ,  
Գուցէ մարդիկը մեզ էլ դառնան տէր...»

## Ժ

Տիրուր, լուսահատ ընկան ճանապարհ  
Դէպի Խլաթալ հեռաւոր աշխարհ,  
Երբ թագաւորը տեսաւ երկուսին  
Փառաւոր կերպով կանգնած առաջին.  
Շատ սիրեց նրանց և շատ հաւանեց.

— Ո՞ր աշխարհիցն էք, — քաղցրութեամբ հարցրեց,  
— «Բաղդադ քաղաքից, — պատասխանեցին  
Եւ խոնարհութեամբ գլուխ տուեցին.

Երկու եղբայրն էլ շատ զարմանալի  
Շնորհքով էին և ակնածելի.

Հասակները մեծ, ինչպէս վեհ լեռներ,  
Դէմքեր ահարկու և հուժկու կռներ.

Գեղեցիկ տեսքից Մելքօն թագաւոր  
Հիացած՝ հարցրեց. Ի՞նչ է հարկաւոր.

Ասացէք, որդիք, լսել պատրաստ եմ,  
Զեր վիշտ, նեղութիւն ես կը փարատեմ.

— «Մեղ հարկաւոր չէ հարստութիւն, գանձ,  
Ալլ կամենում ենք, ոգւով աննախանձ,

Ապաստանելով քեզ մօտ ծառայել  
Եւ սէր, բարիքներ—մեր գործին վալել—

Ստանալ քեզնից. նեղութեան օգնիլ  
Եւ լուսով եղիք—չենք ամաչացնիլ...»

— Ի՞նչ ունէք չունէք, ասացէք որդիք,  
Ծնող, ազգական կամ տուն, հալրենիք...»

— «Բաղդադ քաղաքն է հալրենիքը մեր,  
Ծնողից զբկուած որբեր ենք անտէր.

Աշխարհն է բացօդ մեր օթևանը,  
Աստուածն է եղել մեր պահապանը.

Նա վերևիցն է, իսկ չըկալ ներքեւ  
Պալծառացնող մեր խաւար արե.

Անողորմ բաղդից մենք հալածական՝  
Ընկանք սար ու ձոր խեղճ թափառական,  
Բարերարութեան բաղխեցինք գռներ,  
Բայց իզուր անցան մեր բոլոր լոյսեր:

Մարդկանց քարացած և բիրտ զգացմունք

Զը զարթեցրեց մեր աղի արցունք.  
 Ո՛չ կարեկութիւն և ոչ սփոփանք,  
 Քանի՛ տառապեց անկայուն մեր կեանք...  
 Արդ՝ խնդրում ենք քեզ, արքալ բարերար,  
 Հոգատարութիւն մեր կեանքի համար:  
 Դու եղիր մեզ հայր և միշտ պահպանի,  
 Թո՞ղ քո շնորհը մեզ լինի հովանի...»

## ԺԱ

— Բաց է ձեր առաջ ամբողջ Խլաթը, —  
 Խսկոյն արքալի շարժուեցաւ գութը. —  
 Իմ քաղաքի մէջ ազտա ապրեցէք,  
 Եւ նեզ ժամերին, գուք ինձ օգնեցէք»:  
 Ապա հրամայեց իւր ծառաներին.  
 — «Տարէք մի լաւ տեղ ալս եղբայրներին,  
 Թո՞ղ ջոկ սենեակում միասին ապրեն,  
 Այնտեղ իմ հաշուով հաց տան, կերակրեն...»  
 Երկու եղբայրը հիւրընկալուեցին  
 Եւ թագաւորից անչափ սիրուեցին.  
 Ասլի. Մէլիքը եղաւ խահուէչի<sup>6)</sup>,  
 Դսկ Սանասարը կարգուեց չիբուխչի<sup>7)</sup>:

## ԺԲ

— «Տարին լրացաւ, — վէզիրը մի օր  
 Ասաց Մելքոնին, — լսէր, թագաւոր,  
 Մեզ մօտ ապրում են գեռ ալդ տղաներ,  
 Բայց առանց վարձի և ձրիակերներ...  
 Ի՞նչ օգուտ ունես, ես չեմ հասկանում,  
 Որ հաց ես տալիս, իզուր պահպանում.  
 Ինչու օտարը մեր մէջը ապրի,  
 Մեր շլաւն ու վատը՝ աչքովը տեսնի...»

<sup>6)</sup> Առւրձ առւողւ

<sup>7)</sup> Տիաբարշ առւողւ

— Բարի խորհրդիդ լսելուն հազիր <sup>8)</sup>  
 Ասա ինչ անենք, պատուական վէզիր...»  
 — «Այդ տղաներին մի օր կըկանչես  
 Փորձելու համար, որ դու ճանաչես  
 Ինչ հունար ունին կամ թէ քաջութիւն,  
 Արգեօք նեղ օրում կանեն օգնութիւն...»  
 Արքան հաւանեց վէզիրի խօսքին  
 Եւ հրամալեց կանչել տղերքին.  
 Տղերքը եկան արքունի պալատ,  
 Մելքոնի առաջ կանգնեցին ազատ.  
 — «Ի՞նչ կամք, թագաւոր, պատրաստ ենք լսել».  
 — «Ո՛չինչ, ձեզ միայն այն կուզեմ ասել,  
 Վաղը կըլինի մեծ ճակատամարտ,  
 Դուք կ'երթաք կռուի -ինչպէս տղամարդ...»

## ԺԴ

Վաղը լուսացաւ. երկու եղբայրը  
 Առան գուրզերը, հեծան ձիերը,  
 Դուրս եկան մէյդան ջըրիդ խաղալով,  
 Եկաւ արքան էլ իր մեծ դօշունով <sup>9)</sup>:  
 — «Կուելու կերպը թոն լինի այսպէս:  
 Ասլի Մէլիքը, վէզիրը և ես.  
 Իսկ դոն, Սանասար, մի կողմի վրայ  
 Վերցրու դօշունը, ինչոր այստեղ կար:  
 — Ո՛չ, ո՛չ, թագաւոր, — ասաց Սանասար, —  
 Դուք մեղք կըլինէք և անհաւասար:  
 — «Հապա ո՞նց կուզես, — լսոեց թագաւոր, —  
 Որ գործը լինի խղճմտանքաւոր:

— «Ես ու եղբայրս մի կողմը լինենք,  
 Թոն դօշունիդ հետ երկուսով կռուենք»:  
 — Թոն ալդպէս լինի, — արքան յօժարուեց.  
 Եւ կարճ միջոցում կռիւն սկսուեց:  
 Կատաղի կռիւ, սաստիկ եղաւ ջարդ,

8) Պատրաստ: 9) Զօրքով:

Ալնքան զօրքերից չաղատուեց մէկ մարդ:  
 Երբ թագաւորը տեսաւ զօրք չըկալ,  
 Փրփրեց, բարկացաւ վէզիրի վրայ.  
 — «Իո տունը քանդուի, ալս Բնէ արեցիր,  
 Ամբողջ դօշունը զնւը կոտորեցիր.  
 Դրանք իսկապէս եղել են մարդիկ,  
 Իսկ մենք թուլամորթ և վախկոտ կնիկ...»

## ՖՅ

Հետևեալ օրը եղաւ հրաման  
 Պատժել վէզիրին — դէպի՛ կախաղան:

## ԺԴ

Ալդ քոջութիւնով շատ հռչակուեցին  
 Երկու եղբայրը, բայց չըմնացին  
 Երկար ժամանակ Խլաթ աշխարհում,  
 Ուրիշ ծրագիր ունէին մտքում.  
 — «Ե՞րբ պէտք է հասնենք մեր նպատակին,  
 Սանասարն ասաց Ասլի. Մէլիքին.  
 Զուր ծառալում ենք տէրութեան օտար,  
 Բայց մնաց շէնքը մեր կիսակատար  
 Աղբը գլխին, առանց հետևանք,  
 Ինչու զուր անցնի ալնքան աշխատանք.  
 Տէ՛լ է հարկաւոր, որ տալ ժողովուրդ,  
 Ուրեմն, եղբայր, լսիր իմ խորհուրդ.  
 Ո՛չ դու առաւօտ սուրճ կը մատուցես,  
 Ո՛չ էլ ծիսաքարշ կըպատրաստեմ ես.  
 Հաստատ պայմանին՝ Մելքոն արքալին  
 Վաղը չ'երևանք մենք ամենևին.  
 Այս բանից դրդուած նա կը բարկանալ.  
 Պատճառի համար կը տեղեկանալ.  
 Իսկ մենք չըվախենք կանչած ժամանակ,  
 Այլ բացատրենք մեր վեհ նպատակ...»

## ՖՅ

Եւ եղբայրները պայման կապեցին՝

**ԶԵՐԹԱԼ արքալին համաձայնուեցին,**

### ԺԵ

Երբ թագաւորը տեսաւ առաւօտ  
Երկու եղբալը չ'եկան իրա մօտ  
Կանչեց ու ասաց - ի՞նչ էք մտածում,  
Ինչու համար էք հակակրանք տածում  
Դէպի իմ անձը, որ ձեզ սիրում է,  
Հօրից աւելի խնամք տանում է.  
Գուցէ կարծում էք. թէ նեղացած եմ,  
Իբր ձեզանից վրէժ կը լուծեմ,  
Որ կոտորեցիք այնքան զօրք անբաւ,  
Վէզիրն արդէն պատիժն ստացաւ.  
Ընդհակառակը ես շատ ուրախ եմ,  
Որ ձեր շնորհիւ ուրշից չը վախեմ,  
Ալլ թէ վախենալ ինձնից թշնամին,  
Թնւ թիկունք լինէք նեղութեան ժամին.  
Ուրեմն, ալսօր ինչու չէք եկել,  
Ինձ համար ծխաքարշ և սուրճ պատրաստել.  
Հայր չունէք, ասեմ, մտածում լինէք,  
Մայր չունէք, ասեմ կարօտը քաշէք.  
Զէ որ առաջուց հարցըի «ունէք ի՞նչ»,  
Պատասխանեցիք «բան չունենք ոչինչ»,  
Ել ինչու համար տխուր էք, որդիք,  
Բացատրեցէք ճշմարիտ ձեր միտք...»

### ԺԶ

Ճշմարիտ է որ չունինք հայր ու մայր,  
Ոչ տուն, ազգական, ոչ ուրիշ եղբալը,  
Բացի համակրանքն անդ արքալի,  
Բայց կուզենք յալտնել - մի տեղ ամայի  
Շէնք ենք սկսել բերդի անառիկ  
Եւ վրան թափել աշխատանք, քըտինք:  
Բայց կիսատ թողել, ալս կողմը եկել.  
Այս բանը քեզնից չենք ուզում ծածկել.

Ուստի խնդրում ենք լսես մեր խորհուրդ,  
Օգնելու համար մեզ տաս ժողովուրդ...  
Եւ սկսեցին պատմել միասին,  
Բերդի շինութեան, աղբիւրի մասին:  
Ողորմած արքան խորհուրդը լսեց,  
Նրանց քառասուն տուն յանձնարարեց  
Եւ ասաց. «որդիք, առեք, գնացէք,  
Զեր կիսակատար բերդը շինեցէք...»

## ԺԷ

Միւս առաւտը ճանապարհուեցին,  
Այն աղբիւրի մօտ իջևանեցին.  
Սանասարն ասաց Ասլի Մէլիքին.  
— «Արդեօք Բնչ կ'ասես, եղբայր, այս մտքին.  
Առաջ սկսենք շինութիւն բերդի,  
Թէ կացարաններ խեղճ ժողովրդի։  
Ասլի. Մէլիքը տուեց պատասխան.  
— «Աղքատ ժողովուրդ առանց բնակարան  
Ինչպէս զիմանալ արեգական տակ։  
Նախ պէտք է նրա բարւոքենք վիճակ։  
Եւ սկսեցին շինութիւնները  
Այսպէս եռանդով քաջ եղբայրները,  
Որ տասը տան տեղ փորում, պատրաստում  
Եւ մի օրուայ մէջ տասը տուն շինում։  
Պարիսպները պինդ քարով, աղիւսով,  
Տները շինում իրանք երկուսով.  
Իսկ ժողովուրդը փայտեր էր բերում  
Եւ ցեխ կրելու պաշտօն կատարում.  
Այսպէս չորս օրում քառասնաշակ տուն,  
Աւարտեցին շուտ, արին բնակութիւն.  
Ապա կիսատը բերդի սկսան,  
Եւ եղբայրները քաջ էին այնքան,  
Որ քարէ սեան տեղ քար'օիւն զարկեցին,  
Մէ տարի միջոց — բերդն աւարտեցին...»

## ԺԵ

Ասլի. Մէլիքը վերկացաւ մի օր  
 Գնաց Մէլքօնին, «Դոհ ենք, թագաւոր,  
 Որ գու լսելով մեր բարի խորհուրդ՝  
 Տուիր մեր ձեռքը օգնող ժողովուրդ.  
 Մենք քո որդիքն ենք. բերդը շինել ենք,  
 Քեզ յօտ խնդրելու ահա եկել ենք,  
 Որ բարեհաճես մեզ հետ այնտեղ գաս  
 Եւ գեղեցկաշէն բերդին անուն տաս...»  
 — «Ա. Ե, սիրելիք. ինձ չէք մոռացել  
 Եւ լաւութիւնը իջուր չէ անցել։  
 Համբուրեց Մելքօն Ասլի Մէլիքին  
 Եւ որդեգրեց, աղջիկն տուեց կին։

## ԺԹ

Տղան ու աղջիկն երբ պսակուեցին՝  
 Թագաւորի հետ ճանապարհուեցին  
 Դէպի աղբեկը փառաւոր շուքով,  
 Հեծած ձիերը և անթիւ զօրքով։  
 Խրինջում էին ձիերը թամբած,  
 Գնում յետնից ժողովուրդ խմբած  
 Եւ տանում էին լաւ զարդեր պէս պէս։  
 Այնտեղ անելու փառաւոր հանդէս։  
 Ասլի. Մէլիքը առաջնորդելով  
 Ասաց արքալին բերդը ցոլց տալով.  
 — «Ա. Հա բերդը, տէր, նալիք. շինուածքին  
 Եւ գին գնելով մեր աշխատանքին՝  
 Որչնիր գու նրան և գիր մի անուն։»  
 Արքան զարմացաւ տեսնելով կանգուն  
 Բերդի ամրութիւն մի հսկայական,  
 Քաշած կամարով մեծ ու յաղթական.  
 Ուրախութիւնից խոկոն հրամայեց,  
 Կարմիր զրօշներ օդում ծածանուեց.  
 Զօրքը հնչեց փող և ժողովուրդը  
 Մտաւ գեղաշուք հանդիսով բերդը։

— «Թող Աստուած օրհնէ ձեր ճիգն ու վաստակ։  
Ճուր չէք անցկացրել ձեր կեանք, ժամանակ։  
Ետա ապրիք, որդիք խելօք վարպետ էք,  
Լաւ ձեռքեր ունէք, զործը լաւ գիտէք.  
Առէք օրհնանքս իմ անկեղծ սրտից。  
Ես շատ հիացալ այս սիրուն բերդից.  
Եւ որովհետև անուն չէք դրել  
Ու, հրաշք, ... քարէ սեան գուք սիւն էք տուել՝  
Դրա անունը թող կոչուի «Սեան սիւն»  
Այն օրից մեաց անունը Սասուն...

## ¶

Ալդ գէպքից յետոյ անցան տարիներ.  
Ասիկ-Մէլիքին եղան զաւակներ  
Մէկի անունն էր Ծննդափոքրիկ,  
Եզրալիների մէջ ամենապստիկ.  
Անշրանիկ որդին «վախկոտ» Ցանվէզի,  
Երկուսն էլ անպէտք, միշտ խաղում վէգի:  
Իսկ Խոր զուսանը շատ լաւ էր երգում  
Եւ ողջ աշխարհը խաղով գրաւում.  
Ձենով Սարգիսը ձայն ունէր ահեղ.  
Որ արձագանք էր լինում ամեն տեղ.  
Դաւիթ<sup>10)</sup> անունով մի տղալ էլ կար,  
Բայց թոյլ կազմուածքով, հիւանդ, ցաւագար...

## ¶¶

Ինքն Ասլի Մէլիք շատ կտրիչ մարդ էր,  
Զին ու ջանավար ուժով կըշարդէր.  
Անլաղթելի էր կուում կատաղի,  
Թշնամիներին դարձնում էր գերի:  
Ամեն օր բերդից՝ նժոյգը հեծած՝

<sup>10)</sup> Սրա անունը ժողովրդական վարիանտներում մացել  
է մինչև պյում մութ և անյայտ, չըպէսք է շփոթել իսկա-  
կան Սասունցի Դաւթի հետ։

Նա գուրս էր գալիս զըրահաւորուած։  
 Եւ շատ կողմերում տարածել էր վախ  
 Մշոյ սարերը գրաւել անկախ...  
 Մի օր էլ հասաւ Մուաուլ աշխարհին,  
 Այն էլ գրաւեց և թագաւորին  
 Սպանեց, առաւ կինը այուսին.  
 Եւ կենակցելով ապրեց միասին.  
 Ինքը Մուսուլում նստեց թագաւոր.  
 Եւ ժողովրդասէր և շատ բաղդաւոր.  
 Կինն էլ գեղեցիկ, շատ բարեսիրտ էր.  
 Եւ առաքինի, հանդարտ խղճի տէր.  
 Խոլիմ խանում՝<sup>11)</sup> էր ալդ կնոջ անուն,  
 Որից ծնուեցաւ մի տղալ՝<sup>12)</sup> սիրուն...

## ԻԲ

Իսկ Սանասարը, իբրև սիրասուն  
 Զաւակ բնութեան, նստած էր Սասուն  
 Անչափ սիրում էր իւր ժողովրդին՝  
 Լսող հնագանդ իւր ազատ կամքին,

<sup>11)</sup> Սասար ծոերում Բ. վարիանաի մէջ այս կինը գուրս բերուած է իր Առիւծաձև Մհերի կին, որի և իրը աղդեցութեամբ ամեն ինչ կտակում է նա իւր Խորթ որդի Մոլամէլիրին (?)։ սա սիալ է։ Վարիանաիս երկու հայ Մշեցի հմուտ աշուլների և բռն ժողովրդի ծշգրիտ պատճենների հիման վրայ և մեր երկարամենայ ժողովրդական նիւթերի բազմաձիւղ աղբիւրների վերաբերեալ ուսումնասիրած փորձերի շնորհիւ եկել ենք այն էրտէան եղրակացութեան, որ Խոլիմ խանումը եղել է Ասլիմիկիրի երկրորդ կինը, իսկ Մոլամէլիրը նրա Խորթ որդին։ Աերջինս երբ հասակն առնում է և աեղեկանում, որ իր հարազատ հօր սպանողը Ասլիմիկիրն է եղել, մի օր Խարէս աւթեամբ սպանում է նրան և ինքը լինում Մորայ-մէլիք։

<sup>12)</sup> Որովհեաւ հօր անունը Ասլիմիկիր էր, որդու անունը դրին Մոլամէլիք. աես Ս. Մանդինեանի Դիւցազնական աշխարհ և մեր անտիպ Հասունցի Դաւիթ։

Բալց հօր կուռքերը անհանգստացնում  
 Եւ չէին թողնում մնալ Սասունում,  
 Ուստի մտածեց ընկնել ճանապարհ,  
 Դէպի Բաղդատը հայրենի աշխարհ—  
 — «Քանի անցկացնեմ անքուն գիշերներ,  
 Սիրտս արորեն հօրըս արարքներ。  
 Կամ պէտք է զոհուեմ ջարաշար կուռքին,  
 Կամ վերջ տամ հօրս անիրաւ կեանքին.  
 Ասաց ու գնաց:—Հալը նկատեց  
 Եւ Սանասարին իսկոյն ճանաշեց.  
 — «Ն' նչքան մեծ է, կուռք, քո զօրութիւնը,  
 Որ Սանասարի կտրելով քունը՝  
 Քաշեցիր, բերիր մատաղ կամաւոր,  
 Գիտեմ, միւսին էլ կըբերես մի օր...»

## իԳ

Մալըն աստուածապաշտ<sup>13)</sup>, բնութեամբ բարի,  
 Տեսնելով վտանգն իր Սանասարի՝  
 Սկսեց տիրել և շատ արտասուել,  
 Փրկութեան համար մարդուն աղաշել:  
 Բալց Սենեքերիմ, սիրաը քարացած,  
 Առաւ սուրն ու թուր. սաստիկ կատաղած  
 Կանչեց. «Եկ, որդի, զնանք տեսութիւն,  
 Տուր հզօր կուռքին երկրպագութիւն,  
 Քեզ պէտք է զոհեմ, ուր ես թափառել,  
 Խոստումս անկեղծ կ'ուզեմ կատարել:
 Սանասարն ասաց. «Իմ հալը թագաւոր,  
 Հաւատա՛, կուռքդ շատ է զօրաւոր.  
 Գիշերն ալնտեղ ըըթողեց խաղաղ,  
 Միւս եղբօրս էլ կըբերէ մատաղ:  
 Ապա երկուսով մտան կոատուն.

<sup>13)</sup> Ասլիս-մէլիթը և Սանասարը նոյնպէս եղել են Աստուածապաշտ, այնպէս որ իրանց մօր հետ ամբողջ հոգու զօրութեամբ ատելիս են եղել Սենեքերիմն՝ նրա մոլեռանդ կռապաշտութեան և անխիղճ բռնակալութեան համար:

— «Ո՛րդի, տուր կուռքին երկրպագութիւն»:  
 — «Ո՛չ, լսիր, հայրիկ, դեռ փոքրիկ էինք,  
 Երբ մենք Բաղդադից հեռացել էինք,  
 Ուստի ըլքիտենք կուռքիդ զօրութիւն,  
 Առաջ տուր ինքդ երկրպագութիւն,  
 Որ օրինակիդ ես էլ հետեւեմ,  
 Ես էլ խոնարհուիմ ու երկրպագեմ...  
 — «Ճես, որդեակ, ալսպէս — հայրը խոնարհուեց  
 Երկիւղածութեամբ և երկրպագեց:  
 — «Ե՞լ, մեռնեմ կուռքի կախարդ զօրութեան.  
 Ցնցեց մարմինս, արիւնս գոյութեան.  
 Աչքերս մթնեց, երբ խոնարհուեցիր,  
 Զըտեսալ, հայրիկ, դու բնչ արեցիր.  
 Ե՞կ, մի անգամ էլ խոնարհութիւն տուր,  
 Ես էլ կըլինեմ կուռքին անձնատուր» <sup>14)</sup>;  
 Երբ հայրը ծընկչոգ դարձեալ խոնարհուեց,  
 Քաջ Սանասարը բարձրաձայն գոչեց.

«Եաւ հացն ու գինի,  
 Տէրը կենդանի.  
 Եւ մի գուրզ իջաւ  
 Սենեքերիմին  
 Խսկոյն ցած տարաւ  
 Եօթն գաղ գետին...»

## Ի՞Դ

Շուշով կուտուն մտաւ Սանասար,  
 Զարդեց կուռքերը՝ գետնին հաւասար.  
 Առաւ արծաթներ, բոլոր զարդարանք,  
 Իբր ազատութեան թանկագին փրկանք.  
 Յանձնեց իր մօրը. «Մամօ» <sup>15)</sup> ջան, վեր առ,  
 Եինել տուր դրանցից զարդեր քեզ համար.

<sup>14)</sup> Փողովրդի պատմելով՝ Սանասարը առաջին անգամին յարմարութիւն չէ գտնում Սենեքերիմին հարուածելու կամ սպանելու... <sup>15)</sup> Մայրիկ:

Ալլես չըկալ այն լիրը գազանը,  
 Որ քարքանդ արեց ողջ Հայաստանը.  
 Նա, որ շատերին թշուառացրեց,  
 Հայ ազգի թիւը նուազեցըրեց.  
 Նա, որ արիւնով ներկեց հայ գաշտեր,  
 Պատեց թախիծով մարդկալին սրտեր.  
 Ոչ մօրկան լացը, ոչ մանկան ճիչը  
 Չ'արթնացրին նրա քարացած խիղճը.  
 Ե՛հ, որ մէկն ասեմ, նրա ոճէրներ  
 Լի են աշխարհիս ամեն անկիւններ.  
 Վերջապէս չկայ այն բռնաւորը,  
 Որ մինչև անդամ որդկերանց օրը  
 Ուզում էր խաւրել, կուռքին զոհելով,  
 Բայց ինքն եղաւ զոհ իր որդու ձեռքով,  
 Փոլթ չէ. հայրասպան թող ես հոչակուեմ,  
 Բայց խղճի առաջ ես զատ հանգիստ եմ,  
 Որ կատարել եմ մի գործ սրբազան,  
 Հեռացնելով երկրից մի զազան.  
 Գազան, որ շատից արցունք է քամել,  
 Շատին գիշախանձ սրերով տանջել.  
 Ահա թէ ինչու հօրս սպանեցի,  
 Որով և շատի կեանքն ազատեցի.  
 Հաւ է շըլինի անգութ, վնասակար,  
 Շատերի հանգիստ ապրելու համար...

## ԻԵ

Մալրը համբուրեց որդու ճակատը.  
 — «Կեցցէ իմ որդին, իմ Սանասարը,  
 Որ մեհեանները կուռքերի փշրեց,  
 Բռնակալ հօրից «վրէժը լուծեց...»  
 Ապա ձեռքերը երկինք տարածած  
 Աղօթեց մալրը... Ստեղծող Աստուած  
 Երկնի ու երկրի, գոհանամ Քեզնից,  
 Որ ազատեցիր այս բարբարոսից.  
 Թո՞ղ կոապաշտութեան գարշանքը կորչի,  
 Աստուած՝պաշտութեան օրէնք մանաշուի...»

Սանասարը հօր գահը բարձրացաւ,  
 Մօր առաջարկով վերջն ամուսնացաւ.  
 Ունեցաւ երկու ուժեղ զաւակներ;  
 Մին Զէնով Յովհանն, իսկ միւսը՝ Մհեր.  
 Զէնով Յովհանը<sup>16)</sup> ունէր բարձր ձայն,  
 Որից սարսում էր ընութիւն համայն.  
 Եօթը գոմշի հաստ կաշին արևում  
 Չորացընում էր, մէջը փաթաթւում,  
 Որ չըտռաքուի ահեղ գոռալիս,  
 Մարդ զարգանդում<sup>17)</sup> էր ձայնը լսելիս...

## 33

Քաջ էր Մհերը<sup>18)</sup>, տեսքով ահարկու,  
 Ոլժ ունէր անլազիթ, կռները հուժկու.  
 Դեռ նա տասնումէկ տարէն հասակում  
 Սասունը տանող լեռնուղիներում  
 Սպանեց քաղցած վիշապ - Առիւծին,  
 Որ «սով» էր ձգել ամբողջ Սասունին  
 Եւ հսկայական ալդ մեծ արկածով  
 «Նա և Առիւծաձեւ»<sup>19)</sup> կոչուեց անունով:

## 33

16) Սարսափում:

17) «Սասմայ ծոերում» (իսկապէս գնահատելի աշխատութիւն է արժ. Գարեգին Սարկաւագի կողմէց) գրի առած Ա. վարիանով թէ Զէնով - Յովհանը եղել է Մհերի երրորդ որդին, — սխալ պէտք է համարել, ուղիղն է Բ. վարիանաը, որ Զէնով Յովհանը եղել է Մհերի եղայրը։ Դաւթի բեռին և Խլաթայ տէրը։ Շատ գրուածներում Սասունցի պահլաւանների ցեղական ճիւղաւորութիւնները ներկայացրուած են ըազմատեսակ ու հակասական, սակայն ես կաշխատեմ փորձերովս լուսաբանել մինչև այժմ մութմացած այդ կարևոր կէտերը։

18) Պարապում էր որսորդութեամբ և աշխարհակալութեամբ։

19) Երևի այս անունը դրել են Դաւթի որդի Մհերի պատիկ մականունից զանազանուելու համար։

Մհերից եղաւ Սասունցի Դաւիթ,  
 Մի շնորհալի պահաւան իգիթ.  
 Այն դիւցազնական պարծանքն աշխարհի,  
 Որ չըվախելով սարսափից մահի,  
 Կռիւ է մղում կըռիւ անդադրում  
 Կեանքի ալեծուփ փոթորիկներում.  
 Եւ կընքից արեան գետեր են վազում...  
 Այսօր էլ ազատ կեանքի երազում...

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑ

ՇԱԿԱՆԵՐ

